Վարդենիս - Քելբաջար ճանապարհին

Ճանապարհի դեպի Քելբաջար

ՔԵԼԲԱՋԱՐԻ ՇՐՋԱՆ
Տարածքը՝ 3 հազար քառ. կմ,
բնակչությունը՝ մինչև գործողությունը,
ըստ հայկական աղբյուրների, 15 հազար,
ըստ ադրբեջանականի՝ 60-80 հազար,
զոհերի թիվը, ըստ հայկական աղբյուրների, հայկական կողմից՝ 15.
ադրբեջանական կողմից՝ 100:

Հայկական զորամիավորումների կողմից Ադրբեջանի Քելբաջարի շրջանի գրավումից մի քանի օր հետո «Զինվոր» թերթի թղթակիցներս՝ ես և լուսանկարիչ Գերման Ավագյանը ՊՆ ԼԿ-ի անձնակազմի հետ, նրա «Նիվա» մակնիշի մեքենայով մեկնեցինք Քելբաջար: Վարդենիսում պարզվեց, որ անբարենպաստ եղանակի պատճառով ուղղաթիռ չի թռչելու դեպի Քելբաջար, իսկ ավտոշարասյունը արդեն մեկնել է: Ուրեմն պետք է մնայինք Վարդենիսում: Այստեղ մենք այցելեցինք շրջանային հիվանդանոցում ապաստանած, պատերազմական գործողություններին մեզ հանդիպած առաջին վկաներին՝ Քելբաջարի շրջանի Չայլու գյուղի բնակիչներ 46-ամյա Ղալաշովա Թելիին և նրա դուստր 16-ամյա Ղալաշովա Ջամինային: Վերջինս ծանր վիրավոր էր: Թելին մանրամասն նկարագրեց իրենց Հայաստանում գտնվելու պատմություն: ղեկավարության կարգադրությամբ 3 օրվա ընթացքում գյուղի բնակիչները պետք է հեռանային: Արդեն գաղթն սկսվել էր: Թելիի ամուսինը և սկեսուրը հիվանդ էին, իսկ տղաները գնացել էին մեքենա բերելու ընտանիքի անդամներին և տան իրերը տեղափոխելու համար և չէին վերադարձել: Եկել են մեքենայով Թելիի մյուս աղջիկն ու փեսան և առաջարկել իրենց հետ մեկնել, սակայն ամուսինը հրաժարվել է գնալ՝ մենք Աստծո պահածն ենք, Աստված է որոշողը, եթե սպանվելու ենք, կսպանվենք, եթե ապրելու ենք, կապրենք: (Քելբաջարում իմացանք, որ փախուստի ժամանակ ուղղաթիռների օդաչուները ադրբեջանցի բնակիչներից 10 հազարական ռուբլի են պահանջել տեղափոխելու համար, իսկ վերջին ժամկետին՝ 20 հազարական): Երբ մարտական գործողությունները տեղափոխվել են գյուղ, Թելին հարևանի տանն է եղել, վախից այստեղից դուրս չի եկել երկար ժամանակ: Իսկ երբ վերադարձել է տուն, տեսել է, որ հայ զինվորները իր վիրավոր աղջկան խնամքով դուրս են տանում, հետո իմացել է, որ տեղափոխում են Հայաստան բուժման համար, և ինքն էլ է մեկնել աղջկա հետ: Թելիի մի տղան ծառայում է ադրբեջանական բանակում և, ով գիտի, հիմա որտեղից է կրակում հայկական դիրքերի վրա կամ գուցե զոհվե՞լ է արդեն: Ջամինան նշաձև աչքերով, մազերը հինած գեղեցիկ աղջիկ է: Գյուղից վերջին մեկնող ադրբեջանցի զինվորները Ջամինային և նրա հորը ստիպել են իրենց հետ փախչել, նրանք հրաժարվել են և ընդդիմացել: Արդյունքում՝ զինվորները որսորդական հրացանով սպանել են հորը և տատին, իսկ Ջամինային կրծքից ծանր վիրավորել: Երբ հայ զինվորները մտել են տուն, Ջամինան շատ է վախեցել, նրա մոտ եղել են հարևանի կինն ու երեխան: Հայերը երեքին էլ առանց վնասելու տեղափոխել են: Երբ տղաներից մեկը հարցրե[illegible] Ջամինային, թե մինչև վերջին դեպքերը ինչ էր մտածում հայ[illegible] մասին, նա գլուխը շրջեց դեպի պատը և ամբողջ մարմնով ցնցվեց: Ադրբեջանուհիներին այցելել էին վարդենիսցի ծանոթները, իրենց հետ բերել սննդամթերք ու անհրաժեշտ պիտույքներ: Նրանց Թելիի տեղեկություններով գտել էին հիվանդանոցի աշխատակիցները: Ջամինային բժշկական մասնագիտական օգնություն էր ցույց տվել և վիրահատել ՊՆ գլխավոր վիրաբույժ Վահան Կիրակոսյանը: Նա մեզ տեղեկացրեց, որ մայրը չունի վնասվածք, իսկ աղջկա վիճակն, իրոք, ծանր է, հավանաբար նրան տեղափոխեն Երևան: «Այս հիվանդանոցի բժշկական անձնակազմը շատ սրտացավ է, բուժքույրերից մի քանիսը լաց եղան, տեսնելով ադրբեջանուհիների ողբերգական վիճակը», - ասաց բժիշկը: Իսկապես, բուժքույրերը հոգատարությամբ խնամում էին ադրբեջանուհիներին՝ կերակրում, մաքրում շրջակայքը, զրուցում նրանց հետ:



Ադրբեջանուհիները Վարդենիսի հիվանդանոցում

Գեներալ-լեյտենանտ Գ. Ղալիբալյան

Հիվանդանոցից մեկնեցինք զինվորական [illegible] ոստիկանության զորամասը՝ գիշերելու: Այստեղ ոստիկանության գնդապետ Սերգեյ Աթարբեկյանը մեզ առաջարկեց իրենց հետ մասնակցել Քելբաջարի շրջանից ավարառու գյուղացիներին հայտնաբերելու գործողությանը: Մենք միացանք նրանց արշավախմբին:

Զինվորական ոստիկանության աշխատակիցները խստորեն դարանակալում էին և ծուղակների մեջ առնում ավարառուներին: Այդ գյուղացիները, որոնք ոտքով կիլոմետրեր էին կտրում անասուններ և տարբեր պիտույքներ բերելու համար, միմյանցից շատ էին տարբերվում. ոմանք Ադրբեջանից եկած խեղճուկրակ փախստականներ էին, որոնք ավարը փոխհատուցում էին համարում իրենց կորցրած ունեցվածքի դիմաց, իսկ մյուսները սովորական թալանչիներ էին:

Այս ավարառուները քելբաջարյան ճակատամարտի մեջ հանդիպած երկրորդ վկաներն էին: Հատուկ հրամաններով արգելված էր անհատական նախաձեռնությամբ Հայաստան ավար տեղափոխելը: Զինվորական ոստիկանության աշխատակիցները և հատուկ նշանակության ստորաբաժանումները ամբողջ գիշեր Սերգեյ Աթարբեկյանի գլխավորությամբ չափչփեցին Վարդենիսի սարերը և հարյուրավոր անասուններ ու թանկարժեք իրեր առգրավեցին:

Հաջորդ առավոտյան մենք հանդիպեցինք փոխգնդապետ Զամանյանին, որը մեզ պետք է կցեր Քելբաջար մեկնող շարասյանը: Նա մեզ ասաց, որ նախորդ օրը մեկնած շարասյան միջից 3 հոգի զոհվել է և որ մենք պետք է շատ զգույշ լինենք: Ընդհանրապես, և՛ ոստիկանության աշխատակիցները, և՛ զինվորականները մեզ խորհուրդ չէին տալիս մեքենայով Քելբաջար գնալ, քանի որ ճանապարհը ուղղակի անանցանելի է, և երկրորդ՝ անտառներում ադրբեջանցի զինվորներ կան, որոնք ճանապարհներով [illegible] գնացող մեքենաների վրա են կրակում: Հենց որ մեր շարասյունը կազմվեց, որ բաղկացած էր մի մեքենայից, մեջը՝ 4 զինվոր և մի հրամանատար, ու մեր մեքենա[illegible] ճանապարհ ընկանք: Ճանապարհի առաջին հատվածում, զառիթափի վրա, դիմացի անիվները խորտակվեցին ցեխի մեջ (նույնիսկ 3 օր հետո նրան օգնության եկած զրահապատ թրթուրավոր մեքենան նույն ճակատագրին է արժանացել): Մենք առաջ անցանք, սակայն ցեխափոսերը և հաստ ձյան շերտերը անհնար էին դարձնում մեր երթը: Եթե ճանապարհին չհանդիպեինք մեզ բախտակից զինվորների ու գյուղացիների և միմյանց օգնելով առաջ չշարժվեինք, հավանաբար [illegible] լուսացնեինք այդ անհե[illegible] ես հերթական մեքենան և ինքդ քեզ հարցնում այս զինվորները, գյուղացիները և մենք ո՞ւր ենք [illegible]: Եվ ցեխից դուրս գալու [illegible] ես հիշում, որ լրագրող ես և որոշակի նպատակով ես գնում Քելբաջար, բայց այս փաստարկն էլ չի ցրում անորոշությունը (հարցիս վերջնական պատասխանը տալիս է Քելբաջարում գեներալ-լեյտենանտ Ղալիբալյանը՝ Քելբաջարը մեր պատմական հայրենիքն է):

Ադրբեջանցի գերիները Քելբաջարում: Կենտրոնում՝ հայ զինվորներ

Ճանապարհի մի երկար հատված պատված էր ցեխախառն ձյան հաստ շերտով, և ուղղակի անհնար էր այդտեղով անցնել առանց թրթուրավոր մեքենայի միջնորդության: Մեզ օգնության հասավ մի տրակտոր, որը «Նիվան» ուղղակի քարշ տալով անցկացրեց այդտեղից: Տրակտորի վարորդը նախորդ օրը զինվորական ոստիկանների ծուղակն ընկած ավարառուներից էր և ծիծաղելով հիշեցրեց, թե ինչպես էին իրեն մերոնք նկարում: Այս ճանապարհով անցնելիս կհավատաս Արմեն Դուլյանի հայտարարությանը, որ Հայաստանից ոչ մի զինվոր չի մասնակցել Քելբաջարի գրավմանը:

Ճանապարհի անանցանելիությունը մեզ ստիպեց գիշերել հանդիպակաց կայանում՝ ադրբեջանցիների թողած գորանոցում, որը միայն զզվանքի զգացողություն էր առաջացնում: Այս տարածքի հսկողություն իրականացնում էր լեյտենանտ Վաղոն, որ սիր[illegible] էր «Անկախություն» թերթը, քաղաքական գործիչներից համակրում էր Պարույր Հայրիկյանին, և մեզ խաշլամա էր հյուրասիրում: Հաջորդ օրը նոր շարասյուն կազմվեց ու շարժվեց առաջ: Ջամլու գյուղում հայ ժամապահը զգուշացրեց ուշադիր լինել, քանի որ նախորդ օրը այդ տեղանքում ադրբեջանցիները սարից գնդացրով սպանել են երեք հոգու: Մի խաչմերուկում նորից հանդիպեցինք հայ զինվորների, որոնց հյուրասիրած ադրբեջանական «Մադրասա» գինին մեր տագնապը մեղմեց:

Գումարտակի հրամանատար Հովսեփ Հովսեփյան

Ճանապարհի եզրերին բազմաթիվ դիակներ էին փռված, տեղ-տեղ վերածված բոցերի, որոնց մեջ միայն մեկն էր քաղաքացիական հագուստով, մնացածը ադրբեջանցի զինվորներ էին եղել:

Քելբաջար շրջկենտրոնը մեծ գյուղ էր, բարեկեցիկ տներով: Զինվորական շտաբում առաջինը հանդիպեցինք գեներալ-լեյտենանտ Գ. Ղալիբալյանին: Նա պատասխանեց մեր մի քանի հարցերին.

-Ի՞նչ ռազմավարական նպատակ էր հետապնդում Քելբաջարի գրավումը:

-Ղալիբալյան-Քելբաջարի **շրջանը գրավելու նպատակն էր ստեղծել ապահով կապ Ղարաբաղի և Մեծ Հայաստանի միջև, քանի որ Լաչինը գտնվում էր բարդ իրավիճակում, շրջափակված հակառակորդի մեծ ուժերով, որոնք ընդունակ են խափանել ճանապարհի աշխատանքը: Մեզ մնում էր գտնել մեկ ուրիշ ելք, բացել մի նոր ճանապարհ Հայաստանի և Ղարաբաղի միջև, որը ապահովության երաշխիքներ տար: Այսպես պլանավորվեց օպերացիան, որն, ինչպես տեսնում եք, բարեհաջող իրականացվեց: Հիմա Հայաստանի և Ղարաբաղի միջև այդ անհրաժեշտ և ապահով կապը բացվել է, որը բացի ամեն ինչից, ամենակարճ ճանապարհն է դեպի Ղարաբաղ: Մի խոսքով՝ պատմականորեն բզկտված կտորները միացան:**

-Այս շրջանը հնարավո՞ր է պաշտպանել:

Ինչ վերաբերում է քաղաքականությանը, չեմ կարող ասել: Իսկ ռազմական և ստրատեգիական առումով պետք է և պարտավոր ենք պաշտպանել: Մռավի գագաթը իրական ամրոց է, և այստեղից մի փոքր զորամիավորում կարող է պաշտպանել ամբողջ շրջանը: Բացի այս ամենը, սա մեր պատմական հայրենիքն է, ու դուք կարող եք շատ հաճախ տարբեր տեղերում տեսնել մեր խաչքարերը: Ընդհանրապես, այստեղ շատ ավելի հեշտ է կազմակերպել պաշտպանությունը, քան հարավում, որն ավելի մատչելի է տարբեր [illegible] զորամիավորումների ու զինատեսակների համար:

Մեր պատմական գործն է վերացնել այս վակուումը, որն արհեստականորեն է ստեղծվել: Եթե իրականացնենք, շատ կհեշտանա մեր հետագա աշխատանքը: Պետք է շեշտել, որ մենք ագրեսորներ չենք, և մեր նպատակն է ժողովրդի անվտանգությունը ապահովել, որը ցանկացած պետության խնդիրն է:

-Քելբաջարի շրջանում մեծ բնակչություն կար, ինչպե՞ս վարվեցին հայ զինվորները նրանց հետ:

Ադրբեջանցիները հասկացան, որ հայ զինվորն այն չէ, որի մասին կարդացել և լսել էին: Շատերը կան, որ նույնիսկ չեն ուզում հեռանալ իրենց տներից: Ադրբեջանցիներից շատերը որ մեզ տեսնում են, խաչակնքում են, մեր ձեռքերն են համբուրում: Մեր զինվորները հումանիստ են, նրանք այստեղ են եկել միայն մարտական գործողություն իրականացնելու համար: Ոչ մի հայ զինվոր որևէ ադրբեջանցու արժանապատվության չի դիպել:

-Իսկ Հայաստանից զորամիավորումներ մասնակցե՞լ են Քելբաջարի գործողությանը:

-Ոչ: Առաջին հերթին Ղարաբաղին էր անհրաժեշտ վերացնել Քելբաջարի պատնեշը: Ղարաբաղի զորամիավորումներն են գրավել այս անառիկ բարձունքները:



Բազմաթիվ անասունների դիակներ էին փռված ճանապարհներին, իսկ լեռնալանջերին անտեր ոչխարներ էին արածում և իրենց բառաչի հետ, կարծես, ասում երկու ոտք վա՜տ, չորս ոտք լա՜վ:

Եվ դեպի Քելբաջար լեռնային կիրճերով անցնող ճանապարհով գալիս, և՛ Ղալիբալյանի հետ զրուցելուց հետո զարմանում էի, թե ադրբեջանցիները ինչպես են հանձնել այս անմատչելի տարածքը: Միայն փոքրիկ զորամիավորումները իրենց դիրքերում մնալով և առանց հերոսության մարտական հանձնարարությունը կատարելով կարող էին պահել շրջանը:

Նախորդ օրը ուղղաթիռով պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնից երկու աշխատակիցներ էին եկել Քելբաջար: Նրանք մի երկհարկանի տուն էին ընտրել օթևանելու համար: Այդ տունը նկուղներում հայտնաբերված կերակրատեսակներով, կահկարասիով, արտաքին և ներքին հարդարանքով հայկական տուն էր հիշեցնում, և միայն ադրբեջաներեն գրքերը ու զուգարանում դրված սափորն էին մատնում, որ այստեղ ադրբեջանցիներ են ապրել: Տունը թափթփված էր և մի երես թալանված: Գետնին սփռված էին ընտանեկան լուսանկարներ և Ռաֆայելի «Սիքստինյան տիրամոր» պատկերը, ապակին կոտրված: Նախորդ օրը եկած լրատվական կենտրոնի տղաներից մեկն ասում էր, որ առաջին րոպեներին ցանկություն է [illegible] ամեն մի իր վերցնել, հետո արդեն ընտրություն ես կատարում արժեքավորի և անարժեքի մեջ, քանի որ այդքան բեռը հնարավոր չէ տեղափոխել Երևան: Ընդհանրապես Քելբաջարի տները շատ հարուստ էին, նկուղները պայթում էին սննդամթերքից: Ասում էին, որ տեղի ադրբեջանցիները հարստացել էին Ղարաբաղի բնակավայրերի թալանի հաշվին: Բայց ինձ թվում է, որ ադրբեջանցի բժիշկը, որի տանը մենք գիշերեցինք, դժվար թե թալանով զբաղված լիներ:

Մենք էլ չդիմացանք թալանի գայթակղությանը և փողոցում հանդիպած գրախանութի կողպեքը կոտրելով ներս մտանք: Այստեղից մի կապոց գիրք վերցրինք: Գրախանութը միակ տեղն էր, որ թալանված չէր և քիչ թե շատ կոկիկ տեսք ուներ: Փողոցում մի սպա, տեսնելով ընտիր գրքերի կապոցը ձեռքներիս, ասաց, որ ադրբեջանցիները վայրենի ժողովուրդ են և գիրք չեն կարդում: Այդ պահին փողոցում անցնում էր մի կին, ձեռքին թերմոս, և մտքովս անցավ. տեսնես այս կինը Ռեմարկ կամ Բալմոնտ կարդացե՞լ է: Ընդհանրապես քաղաքում շատ էին ՆԿ համարանիշներով բեռնատարները, որոնք կանգնած էին տների առաջ և բարձվում էին ապրանքով: Ղարաբաղցիները որպես անտուններ և թալանվածներ այստեղից անարգել ավարը տեղափոխում էին: Չնայած զինվորներն ասում էին, որ տուն ու տեղ կորցրած կարիքավորները չեն գալիս ավարառության: Հայաստանցիների գործը դժվար էր. նախ՝ մեքենայի ճանապարհ չկար, և հետո ավարը ոտքով տանելու դեպքում էլ նրանք կարող էին հայտնվել զինվորական ոստիկանության ծուղակում:

Հաջորդ օրը Հովսեփ Հովսեփյանի գումարտակի մարտիկ Վասիլ Տեր-Գասպարյանը մեզ առաջնորդեց գերիների կայարանը: Գերիները մոտ երեսուն հոգի էին, որոնցից երեքը՝ զինվոր, մյուսները՝ տարբեր տարիքի խաղաղ բնակիչներ: Ադրբեջանի բանակի շարքային Մամեդով Կյուրշուդը տասն ամիս է, ինչ ծառայում է: Չի հասցրել նահանջել, որովհետև փորձել է հիվանդ քրոջը դուրս բերել գյուղից: Գերի է հանձնվել կամավոր, զենքը ձեռքին: Նա միայն մի ցանկություն ուներ. հանդիպել մորն ու քրոջը: Երբ հարցրի, ի՞նչ կլիներ, եթե խուսափեր ծառայությունից, Կյուրշուդն ասաց, որ խստագույնս կպատժվեր, նույնիսկ կարող է գնդակահարության ենթարկվեր: Այդպես իր հետ ծառայողներից երկուսին՝ շարքայիններ Ալի Ջամինին և Էլ Չինին դասալքության համար գնդակահարել են Իսփիսուի զորամասում: Իսկ շարքային Իսմայիլին դիրքերում իր ձեռքով գնդակահարել է լեյտենանտ Մամեդովը: Մյուս ռազմագերին Ասկերով Ասկերն էր, ազգությամբ լեզգի: Նա եղել էր իրենց զորամասի բուժակը: Ադրբեջանցիների մեջ միակ կիսատ-պռատ ռուսերեն իմացողը էյվազ Մուստաֆան էր, մասնագիտությամբ աշուղ, որ չհրաժարվեց մեզ համար թառ նվագել և երգել: Էյվազը հայ մարտիկների աչքի առաջ իր կնոջը հրացանով սպանել էր, որ նա չընկնի հայերի ձեռքը, հետո փոս փորել և ադրբեջանական ադաթով թաղել էր: Այդ արարքի համար հայ զինվորները էյվազին հարգում էին և օղի հյուրասիրում: Ադրբեջանուհիները այստեղ իրենց ապահովության մեջ էին զգում: Նրանք հայ զինվորների համար լավաշ էին թխում, զինվորների ձեռքերը ջերմորեն սեղմում և «ղուրբան, ղուրբան» ասում: Այդ կանայք իրականում գերիներ չէին: Նրանց մի մասը նույնիսկ կամավոր էր եկել այստեղ՝ ռազմական գործողությունների տարածքից հեռու մնալու համար: Զատիկը նշեցինք Քելբաջարի ՊԱԿ-ի շենքում բժիշկ Մադոյանի հետ: Մադոյանն այստեղ այն հազվագյուտ մարդկանցից էր, որ իր հետ Վարդենիսից հատուկ կերակրատեսակներ էր բերել Զատիկը տոնելու համար: Նա անընդհատ կրկնում էր՝ այսքան ավերից ու զոհերից հետո եթե այս տարածքը կրկին հանձնելու ենք հակառակորդին, ուրեմն մի՞ թե այս ամենը մի բանկա կոմպոտի կամ մի երկու գլուխ անասունի համար էր: Հետո հանդիպեցինք գումարտակի հրամանատար Հովսեփ Հովսեփյանին և մի փոքր հարցազրույց անցկացրինք նրա հետ.

Քելբաջարում հանդիպեցինք ահաբեկիչ Անդրանիկ Պողոսյանին: Անդրանիկն իր հետ եռագույն դրոշ էր բերել, որի վրա ստորագրում էին Արցախյան պատերազմի մարտիկները:

Հովսեփ Հովսեփյան-Մեր գումարտակը պարտականություն ուներ հատել Քելբաջարի ուղղությունը, որը մենք ճշգրիտ կատարեցինք: Մենք առաջինն էինք, որ մտանք Քելբաջար: Մարտի 31-ին սկսեցինք մոտենալ քաղաքին և գիշերն առաջին տները մտանք: Ապա հրաման ստացանք թույլ տալ ամբողջ խաղաղ բնակչությանը հանգիստ դուրս գալ քաղաքից: Վերցրեցինք քաղաքի շրջակայքի բոլոր բարձունքները և սպասեցինք ամբողջ օրը, մինչև վերջին 3-4 հազարի չափ բնակչությունը ուղղաթիռներով տեղափոխվեց: Ապրիլի 1-ին, երբ արդեն ամբողջ ժողովուրդը դուրս էր եկել, հրաման ստացանք մտնել քաղաք: Եվ եթե հանդիպեցինք խաղաղ բնակիչների, հանգիստ թողեցինք:

-Ձեր կարծիքով, կազմակերպչական տեսակետից վերջին գործողությունը տարբերվո՞ւմ էր նախորդներից:

Սփյուռքից մենք երեք տարի առաջ եկանք, մինչև հիմա կռվում ենք Արցախի ազատության համար: Այս երեք տարվա ընթացքում մեծ փոփոխություններ են եղել: Ժամանակին Շահումյանի շրջանում, երբ հետապնդվում էինք ռուս զինվորների կողմից, 2-3 ավտոմատ ունեինք և համարում էինք դա մեծ հարստություն: Այժմ ստեղծվել է կանոնավոր բանակ իր ողջ սպառազինությամբ, և եթե մի փոքր էլ պաշտպանության կառուցվածքները բարեփոխվեն, շատ բան իր տեղը կընկնի: Այս վերջին գործողությունը, կարելի է ասել, ամենակազմակերպվածն էր: Մենք եթե բախտ ունեցանք առաջինը մտնել քաղաք, ապա դա արդյունքն էր մյուս ստորաբաժանումների ճշգրիտ աշխատանքի: Քանի որ՝ բոլոր հրամանատարները պարտաճանաչ կատարել են իրենց հանձնարարությունները, գործողությունն էլ հաջող է ավարտվել:

-Ինչո՞վ բացատրել, որ գերիները ձեր հսկողության տակ են:

Քանի որ առաջինը մտանք քաղաք, գերիներին էլ առաջինը մենք վերցրինք: Բացի այդ, ասեմ, որ մեր գումարտակը մաքրեց և մաքրում է բոլոր գյուղերն ու սարերը ադրբեջանական զինված խմբերից: Այդ ընթացքում գյուղերում հանդիպեցինք ծերունիների և ով ցանկություն ունեցավ ապահովության համար մեզ մոտ տեղափոխվել, բերեցինք: Իսկ ով ցանկացավ մնալ, թողեցինք: Մի քանի ծերերի, որ թողնեինք, անխնամ մնալով ուղղակի կմեռնեին, և մեր պարտքն էր նրանց տեղափոխել: Մարտական գործողությունների մասնակցած բոլոր ստորաբաժանումները շատ խիստ հրաման ստացան. խաղաղ բնակչությանը չդիպչել: Իսկ զինված խմբերի զինվորներից ով կամավոր հանձնվեց, չսպանեցինք: Իսկ ով փորձեց դիմադրել, արժանին ստացավ:

Ուղղաթիռով վերադարձանք Հայաստան: Վարդենիսում վայրէջք կատարեցինք: Ես մոտեցա օդակայանի մոտի տանը և ջուր խնդրեցի: Ինձ թվաց, թե ես Քելբաջարում եմ:

Վահան ԻՇԽԱՆՅԱՆ

Լուսանկարները՝ Գերման Ավագյանի